ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՍԱՄՎԵԼԻ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՉԱՓԱԾՈ ԵՎ ԱՐՁԱԿ ԼԵԳԵՆԴՆԵՐԸ

Ժ.01.01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

© National Library of Armenia OCR by Portmind

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր ԶԱՎԵՆ ՎԱՍԻԼԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր ՎԼԱԴԻՄԻՐ ԱՂԱՍՈՒ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու,
ԱՆԻԿ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. հունիսի 28-ին՝ ժամը 12^{30}-ին, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի «Հայ և արտասահմանյան գրականության» 003 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. մայիսի 23-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների
թեկնածու՝ Ս. ՍԱՐԳԱՐՅԱՆ

11-226

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է Ավետիք Իսահակյանի չափածո և արձակ լեգենդների ուսումնասիրությանը:

Աշխատանքում քննության են առնվել լեգենդի ժանրային առանձնահատկությունները, Իսահակյանի լեգենդների թեմատիկ ուղղվածությունը, բանահյուսական հիմքերի և գեղարվեստական մշակման ընթացքում հեղինակի կատարած փոփոխությունների համեմատության միջոցով դիտարկվել են դրանց գաղափարական հատկանիշները:

Վեր են հանվել Իսահակյանի լեգենդների բանարվեստային (պոետիկական) յուրահատկությունները, ընդ որում՝ չափածո լեգենդների դեպքում առանձնակի ուշադրություն է դարձվել տաղաչափությանը, իսկ արձակ լեգենդների դեպքում՝ ժամանակի և տարածության հարցերին:

Ավ. Իսահակյանի լեգենդները ենթարկվել են նաև բնագրագիտական (տեքստաբանական) քննության, որը թույլ է տվել գրողի գեղարվեստական մտածողությունը դիտել իբրև ստեղծագործական պրոցես:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեև ուսումնասիրողները Ավ. Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր համապատկերում այս կամ այն չափով անդրադարձել են նաև գրողի լեգենդներին, սակայն այդ անդրադարձները որոշ իմաստով դրվագային են և հնարավորություն չեն տալիս Իսահակյանի լեգենդները դիտել ամբողջության մեջ: Սույն աշխատանքը նպատակաուղղված է այդ բացը լրացնելու խնդրին, և ամենից առաջ դրանով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

Բարոյաբանական հզոր լիցքերով և գեղարվեստական ինքնատիպ լուծումներով Իսահակյանի այս ստեղծագործությունները մնայուն արժեքներ են՝ ձևի և բովանդակության ներդաշնակությամբ: Նրա լեգենդներում ծավալվող խոհը, հիրավի, հունցված է լույսից և մարդու հանդեպ բացառիկ սիրուց. ժամանակի և տարածության անսահմանության մեջ մարդու անցավոր կյանքի իմաստավորումը, մահվան հաղթահարումը Իսահակյանը տեսել է նրա արարչագործ ոգու, գթության, այլասիրության մեջ:

Ընդգծելով ժամանակի վճռորոշ դերը գրական-գեղարվեստական երկի պատմագործառնության համակարգում՝ Ավ. Իսահակյանը գրել է. «...ժամանակները ճշտում են արժեքները, մաղից անց են կացնում, և ինչ որ կապված է միայն ժամանակի հետ, մաղից անցնում է, որպես իր դերը կատարած, որպես պատմական արժեք միայն, իսկ այն, որ ժամանակի հետ կապված լինելով, նաև ընդհանրական է, մնում է մաղում և շարունակում իր կյանքը նաև հետո, երբեմն շատ երկար, անգամ դարերով»[1]:

Իսահակյանի ստեղծագործության և մասնավորապես լեգենդների դեպքում գործում է վերջին տարբերակը. նրա լեգենդներն անվերապահորեն դասվում են «ժամանակների մաղի» մեջ մնացած հավերժական արժեքների թվին:

Այս իմաստով Իսահակյանի չափածո և արձակ լեգենդների ուսումնասիրությունը արդիական է և կարող է օգտակար լինել Վարպետի ստեղծագործությամբ հետաքրքրվող յուրաքանչյուրի համար:

---

[1] Զարյան Ռ., Ավետիք Իսահակյան, Եր., 1974, էջ 71:

© National Library of Armenia

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության բուն առարկան Ավ. Իսահակյանի լեգենդներն են, նպատակը՝ դրանց հնարավորինս համակողմանի քննությունը:

Վերոնշյալ նպատակով էլ պայմանավորված են ուսումնասիրության հիմնական խնդիրները՝ լեգենդի ժանրային առանձնահատկությունների դիտարկումը, Իսահակյանի լեգենդների թեմատիկ-գաղափարական հատկանիշների վերհանումը, բանարվեստային և բնագրագիտական վերլուծությունը:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Խորհրդային տարիների գրաքննադատության մեջ գրականությունը, այդ թվում՝ Ավ. Իսահակյանի ստեղծագործությունը, քննվում էր առավելապես սոցիոլոգիական մոտեցմամբ, ըստ որի՝ գրականությունը հասարակական արվեստ է և պետք է ամբողջովին արտացոլի տվյալ դարաշրջանի հասարակական կյանքի երևույթները: Հակառակ դեպքում գործում էր ամենազոր գրաքննությունը՝ պատճառ դառնալով կա՛մ գրողի լռության, կա՛մ, լավագույն դեպքում, այլասացությամբ ասելիքը տեղ հասցնելու ձևերի մշակման: Այս շրջանում բացառություն չէր կարող կազմել նաև Ավ. Իսահակյանի ստեղծագործությունը, և գրողը կարող էր մեղադրվել «անհայտ ուղիներով թափառելու» մեջ:

Իսահակյանի ստեղծագործության գնահատման ավելի ուշ շրջանում այդ միակողմանի մոտեցումը հաղթահարվեց մեր գրականագիտության կողմից: Այդ գործին իրենց **ուսումնասիրություններով** ու **մենագրություններով** նպաստեցին **Ա. Ղանալանյանը** («Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները», 1955), **Գ. Հովհաննիսյանը** («Ավետիք Իսահակյանի արձակը», 1963, և «Ավետիք Իսահակյանի ստեղծագործական աշխարհը», 1969), **Լ. Հախվերդյանը** («Իսահակյանի կյանքն ու գործը», 1974), 1975-ին՝ **Կ. Գրիգորյանը** ("Творческий путь Аветика Исаакяна"), **Ա. Իսահակյանը** («Ավետիք Իսահակյանի արձակը»), **Մ. Մկրյանը** («Իսահակյանի հումանիզմը»), **Ս. Գայսարյանը** («Ավետիք Իսահակյան»), 1977-ին՝ **Ա. Ինճիկյանը** («Ավետիք Իսահակյան»), 1983-ին՝ **Ա. Մուշեղյանը** («Ավետիք Իսահակյան») և այլք:

Հուշագրությամբ հանդես եկան **Ռ. Զարյանը** («Ավետիք Իսահակյան», 1974), **Աղավնին** («Նրա մտերմական աշխարհում», 1975), **Գ. Հովնանը** («Ավետիք Իսահակյան», 1976), **Հ. Ղանալանյանը** («Ավետիք Իսահակյան» հուշ-դիմանկար, 1985), **Վ. Իսահակյանը** («Հայրս», 2000):

Իսահակյանի վերաբերյալ **հոդվածներ** գրեցին **Ս. Սարինյանը** («Իսահակյանի հայտնությունը»), **Էդ. Ջրբաշյանը** («Ավետիք Իսահակյանի քնարերգության հերոսը», «Աբու-Լալա Մահարին» և ռոմանտիկական պոեմի ավանդույթները»), **Հր. Թամրազյանը** («Ժողովրդային երգի ուղին»), **Ժ. Քալանթարյանը** («Իսահակյան-Նիցշե») և այլք: Հատկանշական են նաև «Իսահակյան 100» և **Ա. Իսահակյանի** «Բարև, Վարպետ» հոդվածների ժողովածուները:

Այսուհանդերձ, հայ գրականագիտության մեջ Ավ. Իսահակյանի լեգենդներին նվիրված ամբողջական աշխատություն դեռևս չի ստեղծվել: Սույն

աշխատանքի գիտական նորույթն է Իսահակյանի չափածո և արձակ լեգենդների մասին տալ ամբողջական պատկերացում: Այդ նպատակով ուսումնասիրվել են Իսահակյանի ստեղծագործության վերաբերյալ մինչև այժմ եղած գրականագիտական հիմնական աշխատությունները, ուսումնասիրություններն ու հոդվածները, գիտության պահանջներից ելնելով՝ ժխտվել կամ հաստատվել են թեմային առնչվող կարծիքները, առաջադրվել սեփական տեսակետները:

Ատենախոսության մեջ Ավ. Իսահակյանի լեգենդների մի մասն առաջին անգամ է ենթարկվել գրականագիտական քննության:

Բացի այդ՝ Իսահակյանի լեգենդների ձեռագրային նյութերը (տարբերակներ, տարընթերցումներ), որոնք պահպանվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, հնարավորություն են ընձեռել նորովի ներկայացնել հիշյալ ստեղծագործությունները, այսինքն՝ պարզել կանոնիկ տեքստի վերականգնման ուղիները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատանքում կիրառվել են տեսական, փիլիսոփայական և մեթոդական բազմաթիվ աշխատություններ, որոնք ստեղծվել են ինչպես հայ, այնպես էլ ռուս և արևմտյան հայտնի տեսաբանների, փիլիսոփաների ու քննադատների (Պլատոն, Արիստոտել, Գ.Վ.Ֆ. Հեգել, Մ. Շտիրներ, Ֆր. Նիցշե, Մ. Բախտին, Վ. Գուսև, Ռ. Բարտ, Ռ. Ուելլեք, Օ. Ուորրեն, Էդ. Ջրբաշյան, Ս. Սարինյան, Զ. Ավետիսյան, Ժ. Քալանթարյան և այլք) կողմից:

Ատենախոսության մեթոդաբանության հիմքում դրված է գրականագիտական ու բանասիրական վերլուծությունների և համեմատությունների համադրման մեթոդը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնադրույթները ներկայացված են ՀՀ գիտական հանդեսներում և ժողովածուներում զետեղված հինգ հոդվածներում: Ուսումնասիրությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ դասական գրականության ամբիոնում ու երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից, կցված է նաև հավելված:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ համառոտ ներկայացված են հարցի պատմությունը, թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը:

© National Library of Armenia

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԼԵԳԵՆԴԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրական ստեղծագործության ուսումնասիրության համար միշտ էլ կարևորվել է ժանրային պատկանելության խնդիրը: Այն եղել և շարունակում է մնալ տարբեր ժամանակների մտածողների, գրողների ու տեսաբանների մտասևեռման առարկան: Այդ մասին են վկայում Պլատոնի ու Արիստոտելի, եվրոպական կլասիցիստների՝ մասնավորապես Ն. Բուալոյի, 18-րդ դարի լուսավորական շարժման ներկայացուցիչների՝ Դիդրոյի ու Լեսսինգի, գերմանացի մեծ մտածող Հեգելի, ռուս տեսաբաններ Վ. Բելինսկու, Մ. Բախտինի ու Դ. Լիխաչովի, Գ. Պոսպելովի ու Մ. Կոգանի, իտալացի մտածող Բ. Կրոչեի, ամերիկացի գրականագետներ Ռընե Ուելլեքի և Օսթին Ուորրենի և շատ ուրիշների հոդվածները, ուսումնասիրություններն ու աշխատությունները:

Որո՞նք են ժանրի բնորոշ առանձնահատկությունները:

«Գրական ժանրը իր բնույթով արտացոլում է գրականության զարգացման առավել կայուն, «հավերժական» տենդենցները: ...ժանրը վերածնվում և նորանում է գրականության զարգացման ամեն մի նոր փուլում և տվյալ ժանրի ամեն մի անհատական ստեղծագործության մեջ: ...ժանրը ապրում է ներկայով, բայց միշտ հիշում է իր անցյալը, իր սկիզբը: ժանրը ստեղծագործական հիշողության ներկայացուցիչն է գրական զարգացման պրոցեսում[2],-գրում է ռուս տեսաբան Բախտինը՝ ընդգծելով **ավանդականն** ու **արդիականը** մշտապես ներառելու նրա միտումը:

Էդ. Ջրբաշյանը, ժանրերը սահմանելով որպես «գրական երկերի ընդհանուր տիպեր, որոնք աչքի են ընկնում բովանդակության ու ձևի համեմատաբար կայուն հատկանիշներով», առանձնացրել է երեք կարևոր չափանիշ՝ **բովանդակության**, **պատկերի կերտման** և **ստեղծագործության կառուցման** ընդհանուր առանձնահատկություններ[3]:

Իրականում ժանրերն անշարժ, իրարից միանգամայն անջրպետված միավորներ չեն, այլ նրանց միջև գործում են փոխներթափանցման օրենքները:

Հաճախ դժվար է տարբերակել մի ժանրը մյուսից: Այս իմաստով բնորոշ է Հովհ. Թումանյանի «Գեղարվեստական երկերի» առաջաբանում Ե. Չարենցի արտահայտած դժգոհությունը. «Անհրաժեշտ է մի քանի խոսք ասել մանավանդ այդ չարաբաստիկ «ժանրերի» մասին: Թե որքան խախուտ բան է «ժանր» հասկացողությունը, զուրկ գիտական որևէ օբյեկտիվ հատկանիշից, ապացուցում է թեկուզ հենց այն հանգամանքը, որ ինքը Հովհ. Թումանյանը իր ժողովածուները կազմելիս շատ հաճախ միևնույն գրվածքը զետեղել է մերթ իբրև «լեգենդ», մերթ իբրև «հեքիաթ» և այլն,- և բոլոր դեպքերում էլ հավասար իրավունքով, որովհետև ամբողջ գրականության մեջ չենք գտնի երկու հոգի, որ միևնույն բնորոշումը տային պոեմին կամ բալլադին, պատմվածքին կամ վեպին...»[4]:

ժանրային ոչ հստակ տարբերակումը նկատելի է նաև Ավ. Իսահակյանի գեղարվեստական արձակի դեպքում: Այսպես՝ Ավ. Իսահակյանի չորսհատորյակը (1958-1959) կազմելիս «Չինական մեծ պարսպի երգը» զետեղվել է լեգենդների և զրույցների մեջ, իսկ վեցհատորյակում (1973-1979)՝ արձակ

[2] Бахтин М., Проблемы поэтики Достоевского, М., 1963, с. 141-142.
[3] Տե՛ս Ջրբաշյան Էդ., Պոետիկայի հարցեր, Եր., 1976, 138-145:
[4] Չարենց Ե., ԵԺ, հ. 6, Եր., 1967, էջ 249:

բանաստեղծությունների և պոեմների մեջ, «Ուշինարան» չորսհատորյակում՝ արձակ պոեմների, իսկ վեցհատորյակում՝ լեգենդների և զրույցների մեջ, կամ՝ «Այդ ոչինչը ես եմ» «Արձակ»-ում (1973)՝ լեգենդների և զրույցների մեջ, իսկ վեցհատորյակում՝ առակների մեջ և այլն:

Չափածո լեգենդները համախմբված են «Բալլադներ և լեգենդներ» վերնագրի ներքո:

Լեգենդը (լատ. legenda - այն, ինչ պետք է կարդացվի) ժողովրդական ավանդության այն տեսակն է, որն ունի հրաշապատում բնույթ: Չափածո կամ արձակ այդ ստեղծագործության մեջ գերակշռող են երևակայական դեպքերն ու դեմքերը, իրերն ու առարկաները:

Լեգենդը Ավ. Իսահակյանի նախասիրած ժանրերից է: «Լեգենդները, առասպելները ցանկությունների արդյունք են: Մարդկային տեսիլները, ձգտումները առասպելների, լեգենդների մեջ գտնում են իրականացում, բովանդակություն, վարձատրություն: Այն, ինչ չի կարելի աշխարհում նյութապես իրականացնել, իր կենսագործումը, ուրեմն, գտնում է երազների, տեսիլների, լեգենդների, առասպելների, պոեզիայի մեջ: Դրանով, դրանց միջոցով տենչացող հոգին հանգստանում է ու բավարարվում[5],- գրում է Իսահակյանը:

Ֆրանսիացի տեսաբան Անդրե Ժոլը լեգենդը դասել է նախնական կամ պրիմիտիվ այն ժանրերի թվին, որոնցից առաջացել են գրական ավելի բարդ ձևերը: Տարրական ժանրերի նրա դասակարգումը հետևյալ պատկերն է ներկայացնում՝ լեգենդ (legende), սագա (sage), առասպել (mythe), հանելուկ (ratsel), ասացվածք (spruch), դիպված (kasus), ավանդապատում (memorabile), հեքիաթ (marchen), սրախոսություն (witz)[6]:

Ռուս տեսաբան Վ. Գուսևն իր «Эстетика фольклора» աշխատության մեջ լեգենդը զետեղել է բանահյուսության էպիկական ժանրերի այսպիսի համախմբի մեջ՝ առած, ասացվածք, հանելուկ, առասպել, ավանդություն, **լեգենդ** (ընդգծ՝. Հ. Վ.), հեքիաթ, անեկդոտ, առակ, պատմվածք, էպիկական երգ-ասք, էպոպեա, իսկ բալլադն ու ռոմանսը՝ որպես անցումային (լիրոէպիկական) ժանրեր[7]:

Ծագելով միջին դարերում՝ լեգենդը սկզբում հանդես է եկել որպես եկեղեցական նշանավոր գործիչների՝ հրաշքներով լեցուն կյանքի ու մահվան պատմություն:

Հայ միջնադարյան լեգենդների լավագույն օրինակներ են Գրիգոր Լուսավորչի, Գրիգոր Նարեկացու վերաբերյալ հյուսված գերբնական պատմությունները:

19-րդ դարավերջից սկսած՝ հայ գրականության մեջ լեգենդի ժանրի նկատմամբ դրսևորվում է առանձնակի ուշադրություն: Այդ երևույթն այսպես է բացատրել Հովհ. Թումանյանը. «Ամեն մի ազգի բանաստեղծություն ժողովրդական լեգենդաներով, ազգային ոգու ստեղծագործություններով է զորանում ու ինքնուրույնության կնիք առնում, հաստատվում, առաջ գալիս, որպես մի ամբողջ ժողովրդի խոսք և դրանով էլ դառնում պատկառելի»[8]:

ժողովրդական լեգենդները հիմք դարձան ոչ միայն տարբեր ժանրի գրական ստեղծագործությունների՝ պոեմների (օրինակ՝ Հովհ. Թումանյանի

[5] «Գրական թերթ», 1960, N 44:
[6] Տե՛ս Ուելլեք Ռ., Ուորրեն Օ., Գրականության տեսություն, Եր., 2008, էջ 350-351:
[7] Տե՛ս Гусев В., Эстетика фольклора, Л., 1967, с. 98-163:
[8] «Թումանյանը քննադատ», Եր., 1939, էջ 77:

© National Library of Armenia

«Թմկաբերդի առումը», Հովհ. Շիրազի «Սիամանթո և Խջեզարե» պոեմները), այլաբանական զրույցների (օր.՝ Վրթ. Փափազյանի համապատասխան երկերը), բալլադների (Հովհ. Թումանյանի «Լուսավորչի կանթեղը», «Աղավնու վանքը», Ավ. Իսահակյանի «Հավերժական սերը», «Ասպետի սերը» և այլք), այլև գրական լեգենդների առաջացման համար: Գլխավորապես ժողովրդական լեգենդների հիման վրա են ստեղծվել Ավ. Իսահակյանի չքնաղ երկերը՝ չափածո և արձակ լեգենդները. «Ավելի վաղ չափածո լեգենդներ, մի փոքր ուշ, չափածոյի կողքին, իսահակյանական արձակ լեգենդներ. առաջինների մի զգալի մասը գրված ազգային ավանդության կամ ավանդավեպի հենքով. «Իրիցկնկա աղբյուրը», «Մայրը», «Մոր սիրտը» և այլն, մյուս խումբը առնված արևելքի ու արևմուտքի ժողովրդական ավանդության հարուստ գանձարանից, բայց և իմաստավորված սեփական ժողովրդի՝ դարերի ճանապարհի կտրած իմաստության դիտակետից»[9]:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՉԱՓԱԾՈ ԼԵԳԵՆԴՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ավ. Իսահակյանի չափածո և արձակ լեգենդները քննելիս առաջնորդվել ենք վերլուծության թեմատիկ-գաղափարական սկզբունքով: Ըստ այդմ՝ Իսահակյանի չափածո լեգենդները պայմանականորեն բաժանել ենք հետևյալ ենթախմբերի՝ պատմական անցյալ, հայրենիք, սեր, մայրական սեր, երազ և իրականություն, իմացության տենչ:

«Խոր արմատներով կապված լինելով հայ ժողովրդի և նրա պատմության հետ՝ Իսահակյանը իր ստեղծագործություններում շարունակել ու զարգացրել է հայ գրականության ազատասիրական և հայրենասիրական ավանդույթները, - գրել է Ա. Ինճիկյանը: - Մշտավառ սերը դեպի հայրենիքը, խոր կարեկցությունն ու վիշտը դարերով հալածված ու տառապած իր ժողովրդի նկատմամբ՝ Իսահակյանի ստեղծագործության հիմնական բովանդակությունն է»[10]:

Հայ ժողովրդից բացի՝ Իսահակյանը խորացել է տարբեր ժողովուրդների պատմական անցյալի, բանահյուսական հարուստ ժառանգության մեջ՝ գեղարվեստական մեծ ուժով արտահայտելով ազգային արժանապատվության, հզորության, ազատասիրության մասին իր ըմբռնումներն ու գաղափարները:

Պատմական թեմատիկային դիմելը Իսահակյանի համար ինքնանպատակ չի եղել: Դա է վկայում «Մեր նախահայրերը» (1917) չափածո լեգենդը: Հայ ժողովրդի ինքնահաստատման, հերոսականության մասին այս փառահեղ ուղերձն ունեցել է իր կոնկրետ հասցեատերը: Հ. Ղանալանյանի հետ զրույցի ընթացքում բացահայտելով «Մեր նախահայրերը» գրելու դրդապատճառը՝ Իսահակյանը խոստովանել է. «Գրության շարժառիթը 1915-1916 թթ. գերմանացիների հրահրած և թուրքերի ձեռքով ի կատար ածված հայկական ջարդերն են: Այդ կոտորածների անմիջական տպավորության տակ եմ գրել «Մեր նախահայրերը», որը մի տեսակ հակաթեզ է, հակաթույն սուլթանիզմի այդ հոտենտոտական (աֆրիկական ժողովրդին հատուկ - Հ. Վ.) քաղաքականության

[9] Հովհաննիսյան Գ., Ավետիք Իսահակյանի արձակը, Եր., 1963, էջ 130:
[10] Ինճիկյան Ա., Ավետիք Իսահակյան, Եր., 1977, էջ 15:

դեմ: Ասելիքս այն էր, որ ինչքան էլ սուլթանը մոլեգնի, հայ ժողովուրդը երկրի վրա կա, պիտի լինի ու ապրի...»[11]:

Լեգենդում գեղարվեստորեն վերարտադրվել է մ.թ.ա. II հազարամյակի կեսերից հայ ժողովրդի կազմավորումը, Ուրուատրի ցեղախմբի հիման վրա ստեղծված Ուրարտու պետության (մ.թ.ա. 9-7-րդ դդ.) անկումն ու հայկական պետության հիմնադրումը:

> Հիմ դրեցին, վառեցին իրենց երդը սրբազան,
> Եվ ծուխն ելավ ու փռվեց գետերն ի վար Նաիրյան.
> Եվ բագինը կանգնեցին իրենց արև-աստծու՝
> Քաջ Վահագնի, բաշխիչը հաղթանակի և գինու[12] ...

Իհարկե վիճելի է իբրև եկվոր ներկայացված հայերի կողմից ուրարտացիներին դուրս մղելու պատմական ելակետը: Սակայն էականը տվյալ դեպքում ոչ այնքան պատմական իրողությունն է, որքան Իսահակյանի հանդես բերած գեղարվեստական միտումը՝ հայ ժողովրդի հզորության ու հարատևության հաստատումը՝ ի հակադրություն նրա նկատմամբ գործադրված բռնության ու կոտորածի:

Մեկ այլ բռնակալի արյունոտ ջարդերի և ժողովրդի երգչի անկոտրում ոգու հակադրությունն է արտացոլվել «Ժողովրդի քնարը» (1937) լեգենդում՝«Սերբիայի դահիճ» Աբդուլլահ փաշայի և սերբ գուսլյար ծեր Միրկոյի կերպարների միջոցով:

Ավ. Իսահակյանի այս լեգենդի գաղափարական բովանդակությունն ընկալելու իմաստով արժեքավոր հուշ է թողել Ստ. Զորյանը.

«Եվ մի օր էլ եկավ տունս և ծոցից հանեց մի քանի թերթ.

-Ինձ ասում են ներբող գրի բռնակալին (Իսահակյանը նկատի ունի Ստալինին - Հ. Վ.) Ահա իմ պատասխանը: Կարդա:

Կարդում եմ վերնագիրը՝ «Ժողովրդի քնարը» (սերբական լեգենդ 18 դարի)»[13]:

Իսահակյանի «Ժողովրդի քնարը» սերբական ժողովրդական մի լեգենդի չափածո բարձրարվեստ մշակումն է: Նշված ժողովրդական լեգենդի մեջ ահեղ բռնակալը Թոփալ փաշան է՝ ազգն ուրացած մի սերբ, որը, արյունով հեղեղելով ողջ Սերբիան, դրա պատվին խնջույք է կազմակերպում: Ապա կանչել է տալիս հզոր երգով սերբերի սրտում կրակ վառած Միրկոյին, որ նա արդար գուսլեով իր անարգ գործերը տարփողի: Սակայն Միրկոն կյանքի գնով հրաժարվում է՝ գետնին զարկելով ու ջարդուփշուր անելով իր քնարը: Սերբական լեգենդի վերջում ազգուրաց փաշան դարձի է գալիս, խաչակնքում է երեսը, համբուրում ջարդված քնարը: Փաշայի այդ արարքը պատճառ է դառնում թուրք զինվորներից մեկի կողմից նրա սպանության[14]:

Իսահակյանի չափածո լեգենդում բռնակալը ոչ թե Թոփալ, այլ Աբդուլլահ փաշան է, որի սերբ և ազգուրաց լինելու մասին այստեղ չի խոսվում: Դրա փոխարեն հեղինակը գեղարվեստական լայն թափով պատկերել է Աբդուլլահ

[11] Ղանալանյան Հ., Ավետիք Իսահակյան, Եր., 1985, էջ 56-57:
[12] Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 2, Եր., 1974, էջ 185 (Իսահակյանի այս հատորից մյուս մեջբերումների էջը կնշվի տեղում):
[13] Զորյան Ստ., Հուշերի գիրք, Եր., 1991, էջ 140:
[14] Տե՛ս Ղանալանյան Ա., Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, Եր., 1955, էջ 42-43:

© National Library of Armenia

փաշայի իրագործած վայրագ ջարդերն ու իր ստահոդ փառքը տոնելու համար սարքած խրախճանքը:

Մեծ վարպետությամբ է կերտված նաև այն դրվագը, ուր փաշան, համոզվելով, որ ժողովրդի երգչին ոչնչով հնարավոր չէ կաշառել, արյունոտ մատը դնում է հայրական նվիրական զգացմունքի վրա՝ սպառնալով նրա չորս զավակին էլ ոչնչացնել:

Չեգ որդիներին փրկելու համար ծեր Միրկոն ճգնում է շարժել լարերը, ենթարկել խոսքերը սրտին, բայց իզուր: Ինչպես որ Իսահակյանը, այնպես էլ իր հերոսը չկարողացավ «սրտին մի խոսք հասկացնել»: Տեսնելով, որ կեռ յաթաղանը դեռ փայլատակում է Սերբիայի վրա՝ ըմբոստ ոտքի է կանգնում Միրկոն.

-Ո՜վ սրիկաներ, ճիվաղ, տմարդի,
Մորթեցե՜ք, լափե՜ք ավել, առավել,
Սակայն իմացեք,
Որ ժողովրդի քնարը երբեք
Չի կարող ստել... (էջ 223-224)

«Իսահակյանի պոեզիան,-գրել է Լ. Ասմարյանը,-հայրենասիրական բովանդակություն ունի. դա ծննդյան օրից մարդու մեջ ներարկված գաղափար է, որ սրբագործված է պատմությամբ և ժողովրդի ապրելու կամքով: Չայրենիքն այդ պոեզիայում վերացական հասկացողություն չէ, այլ միանգամայն իրական: Դա տունն է, հայրենի օջախը, նրա ծուխը, հայրենի լեռն ու քարը»[15]:

Չայրենի հողի զորության ու ծգողական ուժի, հայրենաբաղձության գեղարվեստական մի անմահ կոթող է Իսահակյանի «Չայրենի հողը» (1920) չափածո լեգենդը, որի համար հիմք է ծառայել Ղազարապատ գյուղում լսած մի զրույց: Այդ զրույցի համաձայն՝ մի քաջ զորավար է եղել, որի սուրը երբեք առանց հաղթանակի չի մտել պատյան: Նրա սարսափից թշնամիները չեն համարձակվել մոտենալ երկրի սահմաններին:

Թագավորը, նախանձելով զորավարի ձեռք բերած փառքին ու հեղինակությանը, դավեր է նյութում՝ նրան կորստյան մատնելու: Զորավարը, խիստ զայրանալով, իր հավատարիմ համհարզների հետ թողնում է և հեռանում երկրից: Թշնամին, օգտվելով առիթից, հարձակում է գործում: Ժողովուրդը խնդրում է թագավորին, որ հայրենիք վերադարձնի իրենց զորավարին[16]:

Իսահակյանի լեգենդում բավականին համոզիչ է տրված զորավարի հոգին փոթորկող իրարամերժ զգացումների՝ ոտնահարված արժանապատվության և հայրենասիրության պայքարը այն պահին, երբ թագավորի ու ծերակույտի խնդիրքով եկած պատվիրակները ներկայացնում էին հայրենիքի թշվառ վիճակը.

Լսում էր տխուր պատգամը նրանց,
Վարանմունքի մեջ վշտակոծ հոգին,
Վաղեմի քենը բռնկվեց հանկարծ
Եվ ձեռքը ժխտող տարածեց ուժգին (էջ 193):

[15] Ասմարյան Լ., Ավետիք Իսահակյան, Եր., 1975, էջ 18:
[16] Տե՛ս «Չայաստանի կոչնակ», Եր., 1934, հունվարի 6, N1, էջ 10-12:

ժողովրդի պահանջով նրա մոտ են գալիս հին գուսանը՝ ոսկելար տավիղը ուսին, և ծեր գեղջուկը՝ հայրենի հողի քսակը ձեռքին: Երգում է գուսանը զմրուխտ արտերի ծփանքն ու մթին կիրճերում վիթերի վազքը, խրճիթների ոլորուն ծուխն ու վարդ-աղջիկների կարոտի կանչը: Գուսանի երգը խորապես ազդում է զորավարի վրա: Բայց մայրենի տաղից առավել զորեղ է հայրենի հողը, որն անպարտելի ուժով ձգում է նրան.

Այդ հողն է նրան ծընել ու սընել,
Իր մայրն ու հայրը այդ հողն են դառել,
Եվ հայրենիքն է, ժողովուրդն անմեռ,
Եվ նախնիքները, որ հող են դառել (էջ 196):

«Չայ գրականությունը միջնադարից մինչև Իսահակյանը ունեցել է շատ քնարերգուներ՝ սքանչելի տաղասացներ, ինչպես Աղթամարցին ու Թլկուրանցին, սիրո սրտագրավ երգիչներ, ինչպես Քուչակն ու Սայաթ-Նովան և շատ ուրիշներ, բայց Իսահակյանը, ժառանգելով նրանց ոսկե տավիղը, ավելի բազմակողմանի հնչեցրեց սիրո մոտիվները»[17],- իրավացիորեն բնութագրել է Ստ. Զորյանը:

Իսահակյանի «Լեյլի ու Մեջլում» (1910) չափածո լեգենդում արտահայտվել է դժբախտ սիրահարների անմուրազ սիրո հավերժականության գաղափարը:

Այս լեգենդի համար հիմք է ծառայել Ս. Չայկունու գրառած քրդական համանուն ավանդավեպը*: Չամաձայն այդ ավանդության՝ Մեջլումը մորը պատմում է «դրախտի հյուրին» տեսնելու մասին երազը: Մայրն էլ գնում է «Զզիրու շուկան»՝ փնտրելու և գտնելու որդու երազի աղջկան: Լեյլին, ճանաչելով Մեջլումի մորը, բարևում է նրան, պատմում իր սիրո մասին: Մայրը Մեջլումի մոտ փնովում է Լեյլիին՝ նրան համարելով «ձանձախարիթի պես սև»: Զայրացած Մեջլումը շատ կոպիտ ձևով անիծում է մորը, թե՝ «Աստված հ»օգնություն կը կանչեմ, երկու աչքերդ գազաթեղ դուրս գա», և պահանջում հայտնել Լեյլիին գտնելու վայրը: Անեծքից վախեցած մայրը կատարում է որդու պահանջը:

Անեծքի զորությունից բացի՝ ժողովրդական ավանդավեպում ուշագրավ է կրոնական մոլեռանդության որոշակի տարրերի առկայությունը: Չատկանշական են Մեջլումի հարության, Լեյլիի ու նրա մոր կողմից ոսկորները հավաքելու և Աստված կանչելու դրվագները:

Ժողովրդական այս ավանդության հենքով ստեղծված Իսահակյանի «Լեյլի ու Մեջլում»-ը որակական բարձր հատկանիշներ ունեցող գեղարվեստական երկ է:

Իսահակյանի լեգենդում բացակայում է Լեյլիի ու Մեջլումի հանդիպման այդ երկար նախապատմությունը, Մեջլումի մոր հետ կապված անախորժ դեպքը: Փոխարենը վարպետորեն գծագրված սեղմ դրվագում Մեջլումը խնդրում է մոր օրհնությունը՝ գնալու և Լեյլիին գտնելու.

-Ա՜յ նանե-մերիկ, գլուխս կդնեմ բարձին, կբարձրացնեմ,

[17] Զորյան Ստ., Եժ 12 հատորով, հ. 12, Եր., 1990, էջ 121:
* Այդ ավանդավեպը տպագրված է «Էմինյան ազգագրական ժողովածու»-ում (գիրք 5-րդ, 1903, էջ 71-75)՝ Մոկաց Տիմանցի քրդերի բարբառով և հայերեն թարգմանությամբ:

© National Library of Armenia

Դրախտի հյուրին երազիս կտեսնեմ:
Ա՛յ նանե-մերիկ, հալալ արա ինձի քու ծծի կաթ,
Երթամ՝ աշխարհք ժուռ գամ՝
Գտնեմ Լեյլիին (էջ 175):

Ժողովրդական էպոսին բնորոշ ոգով ու ոճով, բարեմաղթանքով է հյուսել Իսահակյանը ժամանակի զգացողությունը կորցրած սիրահարների հանդիպման պատկերը:

Բնության մեջ աննուրազ սիրահարների անեղծ սիրո շարունակականության մի հիասքանչ արտահայտություն է լեգենդի վերջնամասը.

Աստծու հրամանով երկուսն էլ աստղ դառան,
Աննուրազ Մեջլում ու երազ Լեյլին...
Աստծու հրամանով տարին մեկ անգամ
Լեյլիի ու Մեջլումի աստղերը իրար կուգան,
Կարոտ-ծարավ սրտով կփաթաթվեն իրար,
Պաչ կուտան ու պաչ կառնեն (էջ 177):

1901 թ. դեկտեմբերի 27-ին էր Իսահակյանը գրի առել աննուրազ սիրահարների՝ աստղ դառնալու և տարին մեկ անգամ համբուրվելու մասին զրույցը*, որը հետագայում զետեղել է իր «Հայկական լեգենդներ»-ի մեջ:

Սիրո հարատևության գաղափարն է հաստատվում նաև «Հավերժական սերը» (1914) չքնաղ բալլադում:

Ավ. Իսահակյանի բալլադի հիմքը արաբական «Անթար» զրույցն է*՝ անապատի բեդվին, «հաղթութեան սուր» Անթարի և Թադմորի թագուհի, էլմասի ու Լեբիդի դուստր Գյուլ-Նազարի բացառիկ սիրո մասին:

Արևելյան այս զրույցի հիման վրա Ավ. Իսահակյանն ստեղծել է իր խորքով ու խտությամբ եզակի գեղարվեստական երկ՝ «Հավերժական սերը» բալլադը:

Հրաշագեղ բամբիշի հանդեպ երիտասարդ էլ-Սամանի հզոր սերը Իսահակյանը ներկայացրել է շքեղ պատկերավորությամբ:

Բամբիշի գեղեցկությունը չափվում է բնության միջոցով, որը, սակայն, խամրում է նրա լուսապայծառ կերպարանքի առջև.

Փերուզ ծովը, որ փարում է մշտաթոր
Սեպ ժայռերը Լիբանանի փեշերի՝
Չունի այնպե՜ս, այնպե՜ս փրփուր ծյունաթույր
Ինչպես կուրծքը լուսապայծառ բամբիշի (էջ 179):

Էլ-Սամանի սիրո բարձրությունն էլ չափվում է երկնի ծեղուններով, խորությունը՝ երկրի հիմունքներով, բայց նրանցից բարձր է ու խոր: Իսկ ահա

---

* Այդ զրույցը, ըստ գրականագետ Ա. Մուշեղյանի ենթադրության և բերած փաստարկների, Իսահակյանն է պատմել Թումանյանին Վերնատան հավաքների ժամանակ և հուշել գրչակից ընկերոջը «Անուշ» պոեմի նշանավոր վերջերգը՝ Համբարձման գիշերվա հրաշալի վայրկյանի և սիրահար աստղերի համբույրի մասին (Տե՛ս Մուշեղյան Ա., Ավետիք Իսահակյան, Եր., 1983, էջ 74):

* «Արեւելեան զրոյց» վերնագրով՝ այն տպագրված է «Հյուսիսափայլ» ամսագրում («Հյուսիսափայլ», Մ., 1859, N1, էջ 15-41):

սիրո ուժգնությունը զգացվում է այն դրվագում, երբ էլ-Սամանը հայտնվում է սիրեցյալին կորցնելու վտանգի առաջ.

-Կըխորտակեմ կամարները երկնային,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս.
Ե՛վ կվանեմ և՛ կհաղթեմ չար մահին,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս (էջ 180):

Ժամանակներ կգան ու կանցնեն, իսկ էլ-Սամանի հզոր սերը հար ու հավետ կմնա: Երկնքին ու երկրին ի տես՝ կանգուն է մնում աշտարակը՝ որպես այդ սիրո վկա.

...Որ իմանան վառ աստղերը հեռավոր
Էլ-Սամանի սերը հզո՛ր ու անմա՛հ (էջ 182):

Մայրը՝ «սրբուհու պատկերով, անուշ, վշտոտ և գթառատ» այդ փխրուն արարածը, Ավ. Իսահակյանի համար իսկապես եղել է մի սրբություն, որի մեջ է ամփոփել իր ամենանվիրական, վեհ ու վսեմ զգացումները. «Մայրս աննման կին էր: Ուր էլ որ գնացել եմ, նրա պատկերը միշտ էլ հոգուս մեջ է եղել... ծովի չափ սեր ուներ պահած ամենքի համար. խղճմտանքի մարմնացում էր Աբլաս: Ղազարապատցիք Աբլայիս՝ Ալմաստ խանումի անունով էին երդվում, պաշտամունք ունեին նրա հանդեպ: Մայրը ամենանվիրական էակն է: Արժե աշխարհ գալ միայն մայր ունենալու համար: Մոր աչքերից ավելի հմայիչ ու գեղեցիկ ոչինչ չկա աշխարհում»[18],- խոստովանել է Իսահակյանը:

Մայրական սիրո խորունկ արտահայտություններ են ոչ միայն նրա գողտրիկ բանաստեղծություններից շատերը («Բալես ունի հնդու-մաթա», «Մայրիկիս», «Մայրս տեսավ ինձ շատ տխուր», «Կռունկները շարա՛ն-շարա՛ն», «Որսկան ախպեր», «Ջորահավաք էր...» և այլք), այլև «Պանդուխտ որդին» (1902), «Մայրը» (1907), «Մոր սիրտը» (1919) լեգենդները, իսկ «Որդիական սեր»-ը (1926)՝ որպես մոր հանդեպ զավակի սիրո դրսևորում:

Իմացության ձգտումը գեղարվեստորեն արտահայտվել է Իսահակյանի «Ավգուստինոսի տեսիլքը» և «Սոկրատեսը» չափածո լեգենդներում:

«Ավգուստինոսի տեսիլքը» (1932) լեգենդում իմացության ձգտումն առարկայական բովանդակություն է ստացել տիեզերքն իր ուղեղում պարփակելու Ավգուստինոսի տենչի և ծովը փոքրիկ փոսում զետեղելու մանկան ապարդյուն ջանքի համեմատության միջոցով:

-Ի՞նչ ես անում,- հարցրեց նա մանուկին:
-Ուզում եմ ծովն այս փոսի մեջ զետեղել:
...
-Հապա, ո՛վ հայր, դու ինչպե՞ս ես հանդգնում
Տիեզերքը՝ այնպես անեզր ու անբավ,
Զետեղելու այնքան փոքրիկ քո գանգում...
Մանուկն ասաց,- և տեսիլքը չքացավ (էջ 212):

---

18 Ղանալանյան Հ., Ավետիք Իսահակյան, Եր., 1985, էջ 12:

© National Library of Armenia

Եթե մեռնել, ապա «ընդհուպ մահից առաջ պիտի սովորել չգիտեցածը...»[19]. այս գաղափարն է արտահայտում Իսահակյանի «Սոկրատեսը» (1936) չափածո լեգենդը:

Աթենական ամբոխավար ատյանի կողմից մահվան էր դատապարտված անտիկ հույն փիլիսոփան, որը «գեղեցիկը, ճշմարիտը և բարին» բարձրացրել էր «իմաստության կատարին»: Բայց մահից առաջ մի խնդիրք ուներ իմաստուն Սոկրատեսը. ուզում էր, որ մի հմուտ երաժիշտ իրեն հաղորդակից դարձնի երաժշտության էությանը:

Իր իմաստությամբ, կորովի ոգով Սոկրատեսը իսկապես հաղթում է մահին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՐՁԱԿ ԼԵԳԵՆԴՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Կիրառելով վերլուծության թեմատիկ-գաղափարական սկզբունքը՝ Ավ. Իսահակյանի արձակ լեգենդները խմբավորել ենք հետևյալ կերպ՝ կյանքը և մահը, չարը և բարին, սերը, անձնազոհությունը, ազատության ձգտումը, իդեալի և իրականության հակադրությունը, իմաստության ոգին:

Ավ. Իսահակյանի արձակ լեգենդներում կյանքը և մահն ունեն փիլիսոփայական ուրույն իմաստավորում. «Եթե հասարակական-սոցիալական իրողություններն ու բախումներն իրենց անդրադարձումն են գտնում պատմվածքներում ու գրույցներում, ապա փիլիսոփայական խոհերը՝ արձակ պոեմներում ու լեգենդներում,- հատկանշվում է «Հայ նոր գրականության պատմությանե մեջ: -Կյանքն ու աշխարհը բանաստեղծն ընկալում է իբրև անվերջանալիորեն առաջ շարժվող ընթացք տիեզերական գոյության, հոլովվող ժամանակների և տարածության մեջ»[20]:

«Բուդդհան» (1908) լեգենդում մարդու փրկության՝ բուդդայական ուսմունքի կողմից նախանշված ուղիների (Չորս մեծ ճշմարտություններ, Ութստեղյան ճշմարտություններ, Տասը շղթաներ, Կարմայի օրենք) համապատկերում արտահայտվել է Բուդդայի մեծ կարեկցանքը, որը, նրա արդար ցասումը ճեղքելով, վերահաստատվեց՝ մշտանորոգ կյանքին ի տես. «Ես, որ խղճում էի իմ ափում բույն դրած, այնտեղ ծնած և սնած այս արարածներին, մի՞թե մեր երկիրն էլ այդպիսի մի թռչնի բույն չէ Անսկիզբն Անմահի աստվածային անսահման ափի մեջ ... չէ՞ որ Անսկիզբն էլ իր մեծ գերտիեզերական սիրով և գթով խղճում է մարդկանց և արարածներին ու տեսնելով և ներելով նրանց հանցանքները՝ փրկության պատգամն է ուղարկում նրանց՝ երանական Նիրվանայի ուղին...» (էջ 143):

Ավ. Իսահակյանի ստեղծագործության մեջ և հատկապես լեգենդներում յուրովի ներհյուսվել են Արևելքը և Արևմուտքը: Այս կապակցությամբ Ս. Սարինյանը գրել է. «Դեռ վաղ հասակում նրա դեգերող միտքը թափառեց արևելքի և արևմուտքի փիլիսոփայության ոլորտներում, փորձեց որոնել գոյության տիեզերական խորհուրդը, ըմբռնել պատճառի սկիզբը, քննել շարժման, ժամանակի ու տարածության հարաբերական անսահմանությունը: Աշխարհի հավիտենական նորոգության հին հնդկական պատկերացումները,

[19] Իսահակյան Ավ., Արվեստի մասին, Եր., 1977, էջ 59:
[20] Հայ նոր գրականության պատմություն, h.5, Եր., 1979, էջ 385:

գերմանական փիլիսոփաների ուրույն տրանսֆորմացիաներով, շատ բան տվին Իսահակյանի գեղարվեստական մտածողությանը...»[21]:

Եթե արևելյան մշակույթի մեջ Իսահակյանին առաջին հերթին գրավում էին կրոնական ուսմունքները, բանահյուսությունն ու պոեզիան, ապա արևմտաեվրոպական մշակույթի մեջ՝ գիտական-փիլիսոփայական մտքի ձեռքբերումները: «Ես պիտի օգտվեմ գլխավորապես Հին Ասիայի կրոններից, էպոսներից ու պոեզիայից: Եվ նոր աշխարհի, Եվրոպայի միայն գիտություններից»[22],- կարդում ենք 1895 թվականի հիշատակարանային գրառման մեջ:

Ավ. Իսահակյանի «Շիդհարը»[*] (1907) լեգենդում գործում է Հեգելի դիալեկտիկական զարգացման օրենքը, որն այստեղ ընդգրկում է մասնավոր ժամանակի և տարածության մեջ գտնվող մարդկանց, իրերն ու երևույթները: Դարերի հերթագայմանը զուգընթաց՝ վաղեմի ծանոթ ծովը փոխարկվում է ծարավուտ ու տատասկոտ մի անապատի, անապատը՝ մի մարդաշատ քաղաքի, քաղաքը՝ ծաղկավետ ու զարնանազեղ մի դաշտավայրի:

Այդ շրջապտույտից դուրս է միայն «անդուլ դարերի թափառականը»՝ հավերժական ժամանակի կրող Շիդհարը, և իր հոգու խորքում դառնագին խորհում է իրերի հարահոս ընթացքին անգիտակից մարդկանց ակնթարթային կյանքի մասին. «Այն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին: ... Սակայն ո՛վ փրկարար պատրանք ... Իրենց խխունջից տիեզերական օվկիանի խորհուրդներն են լուծում և օրենքներ սահմանում անհունին և անսահմանին...» (էջ 121):

Իսահակյանի «Անանդան և մահը» (1908) լեգենդում նկատելի են Շտիրների փիլիսոփայության որոշ տարրեր:

Մաքս Շտիրները, ելակետ ունենալով Հեգելի փիլիսոփայությունը, հանգեց անիշխանականության, սուբյեկտիվ իդեալիստական հայեցակետի, ըստ որի՝ միակ իրականը «Ես»-ն է, իսկ ամբողջ աշխարհը՝ այդ «Ես»-ի սեփականությունը: Շտիրների փիլիսոփայության մեջ լիակատար կերպով դրսևորվեց անհատապաշտությունը, որի հիմնական դրույթը անհատի ինքնավարության և նրա բացարձակ իրավունքների ընդունումն է. «Իմ գործը ո՛չ աստվածային է, ո՛չ մարդկային: Այն ո՛չ ճշմարիտ է, ո՛չ լավ, ո՛չ արդար, ո՛չ ազատ, այն իմն է և այն ընդհանուր չէ, այլ միակ է, ինչպես միակ է և եսը: Ինձանից վեր ոչինչ չկա»[23]:

«Անանդան և մահը» լեգենդում կյանքը և մահը, ժամանակը և տարածությունը պարփակված են անհատական ես-ի բացարձակ տիրապետության սահմաններում: «Իմ ոգին խորհում է, ուրեմն ես կամ, ես ապրում եմ, և որովհետև ես կամ, ուրեմն կա և տիեզերքը, եթե ես կամ և կա տիեզերքը, ապա ուրեմն չկա մահը»,- Անանդայի շուրթերով արտահայտված այս գաղափարը սերտորեն առնչվում է սուբյեկտիվ իդեալիստական

[21] Սարինյան Ս., Գեղարվեստական գրականության պատմականությունը, Եր., 1979, էջ 132:
[22] Իսահակյան Ավ., Հիշատակարան, Եր., 1977, էջ 171:
[*] Այս լեգենդը նախապես ունեցել է «Ահասֆերը» խորագիրը, ապա նաև «Թափառական հրեան» ենթավերնագիրը, հետո է անվանվել «Շիդհարը»: Լեգենդի համար հիմք է ծառայել թափառական հրեայի մասին գրույցը, որը դեռ վաղ հասակում Իսահակյանը լսել է իրենց համագյուղացի Օհան տացուից: Ըստ այդ գրույցի՝ թափառական հրեան, անցնելով Հոռոմ գյուղի հովիվների մոտով, հայտնել է, որ «աշխարհանցում» է լինելու:
[23] Штирнер М., Единственный и его собственность, С.-П., 1907, с. 22.

© National Library of Armenia

փիլիսոփայությանը, որտեղ օբյեկտիվ աշխարհն ածանցվում է սուբյեկտից, նրա ապրումներից ու զգացողություններից:

Մարդկային հոգու մեջ բարի և չար նախահիմքերի հարաբերակցության բացահայտումը 20-րդ դարի գիտության և արվեստի հիմնախնդիրներից մեկն էր, որից չէր կարող անմասն մնալ Ավ. Իսահակյանը: Բարու և չարի հիմնախնդրին 20-րդ դարում առաջինն անդրադարձավ գերմանացի հոգեվերլուծաբան-փիլիսոփա էրիխ Ֆրոմը «Մարդու հոգին» աշխատության մեջ: Ըստ Ֆրոմի՝ մարդը ոչ թե միանշանակ կա՛մ չար է, կա՛մ բարի, այլ յուրաքանչյուր մարդու մեջ միաժամանակ գոյություն ունի և՛ գայլը, և՛ գառը, ու միայն իրավիճակն է որոշում նրա դրսևորման ձևը[24]:

Հոգեվերլուծական փիլիսոփայության մեջ տարբերակվում է բռնության կամ ագրեսիվության երեք ձև՝ բարորակ, պաշտպանողական և չարորակ ագրեսիա[25]: Չարորակ ագրեսիայի դրսևորումներից է Դաժանությունը (կամ՝ Դեստրուկտիվությունը), որի գլխավոր ենթատեսակը սադիզմն է: Այն առաջ է գալիս անկարողունակության զգացումից: Անհատը, անկարող զգալով կյանքի նկատմամբ, ձգտում է փոխհատուցել իր այդ թերությունը մարդկանց վրա ձեռք բերած հսկայական իշխանությամբ:

Ավ. Իսահակյանի «Չինգիզ-խանը» (1907) լեգենդում բռնակալություն երևույթը բացահայտվում է կերպարի բռնակալական խառնվածքով թելադրվող վարքագծի դրսևորման միջոցով:

Իսահակյանը լեգենդը կառուցել է բռնակալի կեցվածքի թվացյալ զորեղության և բնության օրենքի կայուն հզորության հակադրության կարգով. «Հզոր է Չինգիզ-խանը. նա կարող է հրամայել մի վայրկյանում խալիֆաների Բաղդադը Տիգրիսի փրփրաբաշ ալիքների տակ ծածկել, Արաբստանի անապատների ծովածածան ավազը մինչև արևի ակը բարձրացնել. Նրա հրամանով կարող են ֆրանկների աշխարհը հողի տակ թաղել ... Սակայն նա անզոր է մի նժույգի սանձահարել» (էջ 132):

Լեգենդում թե՛ «մատաղ եղնիկների բույլեր - չքնաղ, մարմարիրան աղջիկները», թե՛ «արևի աշխարհներից բերված և արևի խանդավառ երազներով արբեցնող հարյուր տարվա հրաբորբոք գինին» և թե՛ «հրեղեն կրծքով Չինու հազարամյա պարիսպները խորտակած և հզոր սմբակներով էլբրուսի պողպատե կողերից ժայռեր պոկած մրրկածին նժույգը» կյանքի խորհրդանիշներն են: Կյանքը թռչնակի պես թպրտում էր խանի հզոր բռունցքի մեջ, քանի դեռ ժամանակը կամաց-կամաց նրա հզոր բռունցքը չէր թուլացրել և նրա բացված ափից անդարձ թռցրել կյանքի թռչնակին: Չինգիզի վերջին ցանկությունը՝ իր հետ ամենքին մեռցնելու ձգտումը, բացարձակ էգոիզմի (ինդիվիդուալիստական փիլիսոփայության գլխավոր դրույթներից մեկի) արտահայտություն է.

«-Վեզի՛ր, հրամայում եմ իմ պետության բոլոր աղբյուրներն ու գետերը, ծովերն ու օվկիանոսները թունավորեցեք, որ ինձ հետ մեռնեն ամենքը, ամենքը...» (էջ 134):

Ի տարբերություն Չինգիզ-խանի, որը ձգտում էր իր տիրապետությունը հաստատել ոչ միայն կյանքի, այլև մահվան վրա, Շի-Հոանգ-Տի Բողդիխանը ձգտում է տիրել Ոգուն ու Մտքին: Շի-Հոանգ-Տի Բողդիխանի ձգտումը՝ իմանալու, թե ինչ է նյութը, պատճառն ու հետևանքը, ժամանակն ու տարածությունը, երբ է

[24] Տե՛ս Հովականյան Յու., Հոգեվերլուծական փիլիսոփայություն, Եր., 2001, էջ 119-140:
[25] Տե՛ս նշվ. աշխ., էջ 124:

տիեզերքի սկիզբն ու վախճանը, որն է մարդու գոյության իմաստը և այլն, այդուամենայնիվ, սոսկ բռնակալական մղում չէ, այլև իմացության ծարավ. Բողդիխանը ձգտում է դեպի տիեզերական միտքը, տանջվում Տիեզերք-Սֆինքսի մեծությունից: «Ինչ է և ինչու է»-ին չտիրապետելու, դրանց ոչ հասու լինելու գիտակցությունն է մղում Բողդիխանին ոչնչացնելու ինչպես աստղադիտարանն ու մատյան-մագաղաթները, այնպես էլ իր առջև լոտոսի տերևների պես դողացող չորս հարյուր հիսուն իմաստուն այրերին: Հետաքրքիր է, որ Բողդիխանի տիրապետման ձգտումը ժամանակի երեք չափումների վրա էլ տարածվում է՝ անցյալի, որի մեջ մտնում էին իր մոխրացրած մատյաններն ու մագաղաթները, ներկայի, որն ընդգրկում էր գործող իմաստուններին ու գիտուններին, որոնց նա ոչնչացրեց, և վերջապես՝ ապագայի, որն ուրվագծվում է իր կազմած հրովարտակի մեջ:

«Ավ. Իսահակյանի դավանանքով կյանքի հիմքը Սերն է,- գրել է Ս. Աղաբաբյանը,- որն ինչքան անձնական, այնքան էլ վերանձնական զգացմունք է, առանց որի ծեղի արժեք չունեն աշխարհիս մյուս վայելքները»[26]:

Սիրո զգացմունքը՝ իր բարդությամբ ու խորությամբ, հուզական ելևէջումների բազմազանությամբ վարպետորեն դրսևորվել է Ավ. Իսահակյանի «Լիլիթ» լեգենդում:

Իսահակյանը լեգենդը գրելիս ուսումնասիրել է Ադամի առաջին կնոջ՝ Լիլիթի մասին հրեական կրոնագրքում (Թալմուդ), Հին ու Նոր Կտակարանների պարականոն գրույցներում, արևելյան, հայկական դիցաբանության մեջ պահպանված ավանդությունները: Դրանցում Լիլիթը հանդես է գալիս մեծ մասամբ որպես չար ոգի, դև, խավարի ծնունդ:

Իսահակյանի լեգենդում էլ Լիլիթը հրեղեն է, Ադամը՝ հողեղեն: Աստված Ադամին ստեղծեց անասունների ոտքի տակ ընկած հողից, Լիլիթին՝ դեպի վեր սուրացող կրակից և պատգամեց.

«-Ադա՛մ, քո բոլոր օրերիդ մեջ հետևիր Լիլիթին, և դու՛, Լիլիթ, հնազանդ եղիր Ադամին» (էջ 186):

Սակայն կկարողանա՞ր հողածին Ադամը հետևել ու հնազանդ պահել «կրակի կտոր» Լիլիթին. «Կհասկանա՞ր Ադամը, որ ծիծաղելի է անվերջանալի Լիլիթի հետ չափվելը, Կհասկանա՞ր Լիլիթը անեզրին տիրանալու Ադամի մարդկային ձգտումն ու հուզմունքը»[27]:

Չհասկացավ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը. որքան իր սիրով ճգնեց մոտենալ Ադամը, այնքան նրանից խույս տալով հեռացավ Լիլիթը: Եվ այդ չհասկացվածության մի բևեռում մնաց Ադամը՝ անհասանելի սիրո ողբերգությամբ, մյուս բևեռում՝ Լիլիթը՝ անորսալի կնոջ էությամբ:

Խորհրդավոր ու անորսալի կնոջ կերպարը շոշափել են համաշխարհային գրողներից շատերը (Յոհան Վոլֆգանգ Գյոթե, Անատոլ Ֆրանս, Միխաիլ Լերմոնտով և այլք), որոնց ստեղծագործություններին ծանոթ է եղել Իսահակյանը:

Լիլիթի գրական կերպավորմանը մեզանում հանգամանորեն անդրադարձել է Կ. Գրիգորյանը, այն յուրովի զարգացրել է Ա. Իսահակյանը[28]:

[26] Աղաբաբյան Ս., Դեպի աղբյուրը լույսի, Եր., 1979, էջ 29:
[27] Հովհաննիսյան Գ., Ավետիք Իսահակյանի արձակը, Եր., 1963, էջ 182:
[28] Տե՛ս Григорьян К., Творческий путь Аветика Исаакяна, Ер., 1975, с. 87-107.
Իսահակյան Ա., Ավետիք Իսահակյանի արձակը, Եր., 1975, էջ 89-92:

© National Library of Armenia

Լիլիթը՝ իբրև կախարդուհի, հանդես է գալիս Յ. Վ. Գյոթեի «Ֆաուստ»-ի առաջին մասի «Վալպուրգյան գիշեր» դրվագում՝ Ֆաուստի և Մեֆիստոֆելի երկխոսության մեջ.

Ֆաուստ.- Այն կինն ո՞վ է:
Մեֆիստոֆել.- Լիլիթն է:
...Լա՛վ նայիր, տե՛ս.
Ադամի կինն է առաջին:
Զգույշ նրա ճոխ վարսերից. կկործանվես[29]...

Ա. Ֆրանսի «Լիլիթի դուստրը» նորավեպի հերոսուհին՝ Լեյլան, կին է՝ ոչ մարդկային էությամբ. նրան անծանոթ է բարոյականության զգացումը, բայց նա չար չէ և ոչ էլ դաժան, այլ քնքուշ է ու հեզ: Լեյլան անմահ է, բայց դժբախտ է, քանի որ հաղորդակից չէ մարդկային տառապանքին ու երջանկությանը:
«Տե՛ր, մահ առաքիր ինձ, որպեսզի գնահատեմ կյանքը:
Տե՛ր, զղջում պարգևիր ինձ, որպեսզի ճաշակեմ վայելքը:
Տե՛ր, ինձ դարձրու այնպիսին, ինչպիսին են Եվայի դուստրերը»[30],- աղոթում է Լեյլան Աստծուն:
«Հայ բանաստեղծը, գրական ավանդույթի իմաստով, առավել սերտորեն առնչվում է Լերմոնտովին,- բնութագրել է Կ. Գրիգորյանը,- Իսահակյանի Լիլիթը հիշեցնում է Լերմոնտովի կերպարները»[31]:
Նրանցից մեկը երջանկության փոխարեն սոսկ երանության զգացում տվող կատարելատիպ է՝ դևի կերպարանքով («Իմ դևը», 1830-1831).

Եվ չի բաժանվի հպարտ դևն ինձնից,
...Ցույց կտա տիպար կատարելության,
Կխլի հանկարծ հավիտենապես,
Տալով զգացում լոկ՝ երանության[32]...

Մյուսը օձի պես սողանցող, թռչունի պես սուրացող խորհրդավոր էակ է, որին չսիրել չի լինի («Դիմանկարին», 1840):
Երրորդը «...դևի նման նենգ էր ու ահեղ և չքնաղ, ինչպես կույսը երկնային» («Թամարը», 1841) և այլն:
Որքան էլ կարևոր է ու հետաքրքիր տարբեր գրողների ստեղծագործությունների միջև տիպաբանական ընդհանրությունների ու տարբերությունների վերհանումը, այնուամենայնիվ Իսահակյանի «Լիլիթ»-ը եզակի է իր ձևով ու բովանդակությամբ: Այստեղ զուտ իսահակյանական ոճն է՝ քնարական անբաքույց հույզն ու խորքային փիլիսոփայությունը Վարպետի ձեռքով հյուսված իրար: Ինչ վերաբերում է բովանդակությանը, ապա, սայաթնովյան բնութագրումը գործածելով, կարելի է ասել, որ Իսահակյանը, իիրավի, ավելի շատ զբաղված էր Լիլիթի տված տառապանքով՝ Ադամի սիրո

[29] Գյոթե Յ. Վ., Ֆաուստ, Եր., 1963, էջ 255:
[30] Ֆրանս Ա., Նովելներ, Եր., 1991, էջ 408:
[31] Григорьян К., Творческий путь Аветика Исаакяна, Ер., 1975, с. 104-105.
[32] Լերմոնտով Մ., Ընտիր երկեր, Եր., 1983, էջ 146:

ողբերգությամբ, քան թե դրա պատճառով՝ Լիլիթի խորհրդավոր ու առեղծվածային էության բացահայտմամբ:
Մի կողմից՝ բնական, մյուս կողմից՝ բանական էակ է մարդը: Բնության օրենքները գոյություն ունեն պատրաստի վիճակում՝ անկախ մարդուց: Մինչդեռ բարոյական օրենքները մարդը՝ որպես բանական էակ, ինքն է ստեղծում:
Մարդը, ըստ Հեգելի, պիտի «բանականի բավարարումը սահմանափակի ոչ միայն անհրաժեշտության շրջանակներում, այլ ունակ լինի այն զոհաբերել ավելի վեհ պարտքի»[33]:
Բնության մեջ գործում է անհրաժեշտությունը, իսկ բարոյական կյանքում՝ պիտոյությունը: Բարոյական օրենքների գլխավոր բաղադրիչը պարտք հասկացողությունն է, իսկ բարոյական պարտքի բնորոշ հատկանիշը՝ անձնազոհությունը[34]: Վերջինս հասարակության մեջ Ճշմարիտը, Բարին, Գեղեցիկը հաստատելու զորեղ միջոց է:
«Դարվինի տեսությունը կենդանական աշխարհին է վերաբերում և այդ առումով էլ ճշմարիտ տեսություն է, բայց մարդը իրավունք չունի այդպես դատելու, նա պարտավոր է թույլերին պաշտպանել»[35], - բնության օրենքները հասարակության վրա չտարածելու նկատառումով այսպես է արտահայտվել Ավ. Իսահակյանը:
Իր հիմքում ունենալով անձնազոհության գաղափարը՝ «Ուշինարա»-ն զարգանում է բնական և բարոյական օրենքների բախման սկզբունքով: Ուշինարան բարոյական օրենքների կրողն ու գործադրողն է, իսկ աղավնուն հետապնդող անգղը՝ բնության օրենքների.
«-Դատավո՛ր,- դիմեց անգղը Ուշինարային,- քաղցը վաղուց ընկճել է ինձ: Մեծ հանցանք է քաղցածի ձեռից խլել նրա սնունդը: Ե՛տ տուր ինձ աղավնին: ...Դու պարտաճանաչ մարդու հռչակ ունես, սակայն ինչու՞ պարտքի օրենքին հակառակ ես գնում: Ինչու՞ ես ինձ զրկում իմ անհրաժեշտ սնունդից:
-Այս անօգնական, մահի սարսուռով դողդողուն թռչունը իմ պաշտպանությանը դիմեց,- առարկեց Ուշինարան,- դու՛, հզոր անգղ, մի՞թե չես տեսնում, որ իմ առաջին պարտքն է - չհանձնել ինձ հավատացող արարածին իր հոշոտող թշնամուն» (էջ 218, 219):
«Ուշինարա» հնդկական զրույցում հանուն բարոյական պարտքի իրագործվող անձնազոհության գաղափարն իր ակունքներով շատ հին է (մ. թ. ա. II հազ.), ծագել է հին հնդկական վեդաներից (գիտելիք, իմացություն): «Վեդաներում,- գրում է Ջ. Ավետիսյանը,- աստվածները շարունակ կերպարանափոխվում են (անտրոպոմորֆիկա)՝ մարմնավորելով բնության ու մարդու ներաշխարհի ֆունկցիաները: ... Հիմնական գաղափարը սրանցում այն է, որ մարդը աստվածայինը կարող է ընդունել միայն զոհաբերության միջոցով: Մարդը զոհվում է մարդկանց համար և աստվածանում: Սա հավերժական պայքարն է չարի դեմ (վրիթա) և բարության հաղթանակը»[36]:
Հնդկական սկզբնաղբյուրներում Ուշինարան Բրահմա, Վիշնու, Շիվա երրորդության աստվածներից մեկի՝ Շիվայի (ավերիչ ուժի անձնավորում) որդին է: Իսահակյանի զրույցում նա արդարամիտ դատավոր է, որն աստվածների

[33] Տե՛ս Հեգել Գ. Վ. Ֆ., Փիլիսոփայության ներածություն, Եր., 1964, էջ 109:
[34] Տե՛ս Թևոսյան Ա., Կանտը և XIX դարի հայ փիլիսոփայական միտքը, Եր., 1981, էջ 116, 128:
[35] Աղավնի, Նրա մտերմական աշխարհում, Եր., 1975, էջ 34:
[36] Ավետիսյան Ջ., Գրական ստեղծագործության հոգեբանություն, Եր., 2011, էջ 136:

© National Library of Armenia

կողմից ենթարկվում է փորձության: Ամպրոպի աստված Ինդրայի և սրբազան հուրն անձնավորող Ագնիի միջոցով քննության է առնվում բարոյական պարտքին Ուշինարայի նվիրվածությունը, որը հաստատվում է նրա անմնացորդ զոհողության գնով:

«Բուդդիան թռչուն» լեգենդում անձնազոհության հիմքը տառապյալ մարդու հանդեպ Բուդդայի մեծ կարեկցությունն ու սերն է, իսկ նպատակը՝ ապրելու կամեցողությամբ տառապող մարդու փրկությունը.

«-Կամենալ ապրել,- խոսեց նա յուրովի,- ահա՜ չարիքի հավերժական արգանդը, որ բնավ չի ստերջանում:

Եվ ամենքը կամենում են ապրել, և յուրաքանչյուրը կամենում է ապրել - մարդը երկրի վրա, և որդը տիղմի մեջ և հունտը հողի տակ» (էջ 222-223):

Լեգենդում անձնազոհությունն իրագործվում է հոգեփոխության միջոցով: Հավերժական Սանսարայի շրջապտույտում թռչունի կերպարանք առած Բուդդան իրեն նետեց խարույկի մեջ՝ սովահար մանկանն իր մսով կերակրելու: Իր անձնազոհ արարքով, որը բարոյական վարքագծի դրսևորում է, Բուդդան նպաստեց բնության օրենքի անհրաժեշտ գործունեությանը, բացասելով հաստատեց ապրել կամենալու անպարտելի անհրաժեշտությունը. «-Ո՛վ ապրելու դառն անհրաժեշտություն,- խոսեց նա իր սրտի մեջ: Անհուն է ձեր տառապանքը, ո՛վ ապրողներ. անսկիզբ և անվախճան ժամանակի մեջ եկող ու գնացող և վերստին եկող, ո՛վ անհամար թշվառներ:

Անհու՜ն է ապրել կամեցողի տառապանքը:

Բայց թո՛ղ ապրի այս մանուկը... օ՛մ, օ՛մ, օ՛մ[*]...:

Այս ասաց թռչունը և իրեն նետեց խարույկի մեջ» (հ. 3, էջ 223):

Ավետիք Իսահակյանը, այս բոլոր փիլիսոփայական ուսմունքները տարրալուծելով իր անհատական ու ստեղծագործական խառնվածքի մեջ, ենթարկելով իր «բարձրագույն ես»-ի տնօրինությանը, ստեղծել է գեղարվեստի մնայուն արժեքներ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԼԵԳԵՆԴՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Խոսքի վարպետ է Ավ. Իսահակյանը՝ ժողովրդական լեզվի ծովից հանած և իր բացառիկ արվեստով բյուրեղացրած գոհարներով:

Պատկերավորման ու արտահայտչական միջոցներից[*] Ավ. Իսահակյանի չափածո և արձակ լեգենդներում լայնորեն գործածվել են մակդիրը, համեմատությունը, փոխաբերությունը, անձնավորումը, չափազանցությունը, նվազաբանությունը, կրկնությունները, աստիճանավորումը, հակադրությունը:

Մակդիրն արտահայտում է առարկայի, երևույթի ոչ թե հիմնական, տարբերակիչ հատկանիշը, այլ նրա պատկերավոր, գեղագիտական բնութագիրը, հեղինակի հուզական վերաբերմունքն ու գնահատականը: Իսահակյանի չափածո և արձակ լեգենդներից ներկայացնենք մակդիրի մեկական օրինակ.

[*] Ըստ Ավ. Իսահակյանի ծանոթագրության՝ «օմ» նշանակում է «ամեն», «եղիցի»:

[*] Պատկերավորման ու արտահայտչական միջոցների դասակարգման ժամանակ առաջնորդվել ենք գլխավորապես Պ. Պողոսյանի «Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները» (գիրք II) և Լ. Եզեկյանի «Հայոց լեզվի ոճագիտություն» աշխատություններով:

Հին ժամանակում, **ոսկի** դղյակում
Ապրում է **չքնաղ** մի աղջիկ,
Այնպե՜ս գեղեցիկ, այնպե՜ս գեղեցիկ,
Ինչպես կարապը՝ թևերն **արծաթյա**
Լճակի **փիրուզ** ջրերի վրա... (հ.2, էջ 172)

«Նա ծերացել է: **Լեռները թունդ հանող** ոտները հազիվ են շարժվում, **ժողովուրդներ սասանող** ձայնը մարել է, **վազր ու առյուծ մեկտեղ սանձող** բազուկը՝ թուլացել» (հ.3, էջ 128):

Համեմատությունը տարբեր առարկաների կամ երևույթների մեջ եղած ընդհանուր հատկանիշի հիման վրա մի առարկան կամ երևույթը տվյալ պահի ու հանգամանքների պահանջով մյուսին նմանեցնելու երևույթն է: «Միմյանցից հեռու և անհամատեղելի առարկաների ու երևույթների մեջ ընդհանրություն գտնելը և դրանք զուգակշռելի դարձնելը,- գրում է Պ. Պողոսյանը,- ոչ միայն նուրբ ճաշակի, սրամտության և բանաստեղծական շնորհքի, այլև իմացության արտահայտություն է»[37]: Նման համեմատությունները Իսահակյանի չափածո և արձակ լեգենդներում ամենաշատ կիրառվող պատկերավորման միջոցներն են.

Նա մեռնում է, **ինչպես ցողը բողբոջում,**
Մանկիկն ինչպես սուրբ գրկի մեջ մայրական.
Եվ հրճծում է, **աղոթքի պես** շշնջում
Հեգ բամբիշի ականջն ի վար էլ-Սաման (հ.2, էջ 181):

«**Դրախտի խնձորների պես**՝ անուշաբույր ստինքները թրթռում են լուսնկային ծոցերում, **ինչպես այն ծիրանի գինին բյուրեղյա սկահների մեջ...**

Փոխաբերությունը պատկերավորման այնպիսի միջոց է, որի դեպքում երկու տարբեր առարկաների կամ երևույթների նմանության հիման վրա նրանցից մեկի անունը կամ հատկանիշը փոխարինվում է մյուսով: Իսահակյանի լեգենդները հարուստ են փոխաբերություններով ստեղծված տպավորիչ ու տեսանելի պատկերներով:

Եվ խաղողը վառ գինի է հավաքում՝
Իր ստինքում, և նռենին՝ ալ-արյուն (հ.2, էջ 199):

«Ես սիրում եմ քո բերանը. **անսպառ և անհուն հրապույրների, անանուն վայելքների նեկտարն է քո բերանը, ուսկից ոսկի մեղուն ամենաքաղցր մեղրն է շինում»** (հ.3, էջ 199-200):

Փոխաբերության հիմքում հաճախ ընկած են պատկերավորման այլ միջոցներ, ինչպես, օրինակ, անձնավորումը[38]:

Անձնավորումը գեղարվեստական այնպիսի հնարանք է, որի դեպքում բնության երևույթները, իրերը շնչավորվում, ստանում են մարդկային հատկանիշներ.

[37] Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, գիրք II, Եր., 1991, էջ 10:
[38] Տե՛ս Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2006, էջ 348:

© National Library of Armenia

Աղբյուրներն ալմաստ ու անապական՝
Բլբուլի ձայնով օրոր ասացին,
Ծաղիկներն անբիծ ու անմահական
Ծածկեցին անզարդ քուն մտածներին (հ.2, էջ 168):

«Խայամը ... ափսոսանքով նայում էր կենսաբաշխ կարմիր հեղուկին, որ ծարավ գետինը ծծեց մի վայրկյանում, թունդ հարբեցողի պես» (հ.3, էջ 163):

Արտահայտչամիջոցներից Ավ. Իսահակյանի լեգենդներում շատ են *կրկնությունները:*

Չափածո լեգենդներում կրկնության տեսակներից լայնորեն կիրառվել է կրկնապատկությունը: Արձակ լեգենդներում գործածվել են նաև կրկնության այլ տեսակներ (համաստիճանություն, օղակ, հարակրկնություն, վերջույթ, շղթայակցում), որոնցից մի քանիսին անդրադարձել է Հ. Մելքոնյանը «Ավետիք Իսահակյանի գեղարվեստական արձակի լեզուն և ոճը» ուսումնասիրության մեջ[39]:

Կրկնապատկությունը խոսքին թափ հաղորդելու, նրա հուզական ներգործությունն ուժեղացնելու նպատակով բառի կրկնությունն է շարահյուսական կամ բանաստեղծական միավորի սկզբում կամ վերջում.

Մնա՛ք բարով, հերի՜կ, մերի՜կ,
Տուն ու օջախ պապերի,
Մնա՛ք բարով, քուրիկ, յարի՛կ,
Ալ վա՛րդ, ալ թու՛շ, ալ գինի՛ (հ.2, էջ 163):

Համաստիճանությունը կրկնության այն տեսակն է, երբ շարահյուսական կամ բանաստեղծական միավորը վերջանում է մի բառով կամ կապակցությամբ, որը դառնում է հաջորդի սկիզբը, և այդպես շարունակ: Համաստիճանության միջոցով է Վարպետը գծել Լիլիթի հրաշալի, հրաբորբոք պատկերը.

«Քո հոնքերը **ծիածանի պես կամար են, ծիածանի պես կամար են** կապել քո հոնքերը **աչքերիդ երկնքի** վրա:

Քո աչքերի երկնքի մեջ ծիր-կաթիններ եմ տեսնում, ուր **հազար-հազար արևներ** են հրդեհում (հ.3, էջ 199):

Հակադրությունը ոճական հնարանք է, երբ խոսքի մեջ իրար հակադիր, բացասող հատկանիշների, առարկաների գործածությամբ շեշտվում է տվյալ միտքը: Հաճախ հակադրության հիմք են դառնում սիրային, հոգեբանական խոր հույզերն ու ապրումները: Այսպիսի հակադրություններն առավել բնորոշ են Իսահակյանի չափածո լեգենդներին.

-Բարձր են երկնի ձեղուները, նազելի՛ս,
Բայց իմ սերը բարձրաբերձ է նրանցից.
Խոր են երկրի հիմունքները, նազելի՛ս,
Բայց իմ սերը խորախոր է նրանցից (հ.2, էջ 180):

[39] Տե՛ս Մելքոնյան Հ., Ավետիք Իսահակյանի գեղարվեստական արձակի լեզուն և ոճը, Եր., 1990, էջ 156-170:

Հակադրությունը ընդունակ է նաև խոսքին հաղորդելու խոհական-վերլուծական բնույթ: Այդպիսի հակադրություններով հարուստ են Իսահակյանի արձակ լեգենդները:

«Տեսա՝ աշխարհը այնքա՜ն մեծ և զգացող արարածը այնքա՜ն փոքր, բայց նրա տենչանքն ու տանջանքը աշխարհից մեծ» (հ. 3, էջ 222):

Պատկերավորման ու արտահայտչական նշված միջոցներից բացի՝ Ավ. Իսահակյանի արձակ լեգենդներում կիրառվել են շրջասությունը, այլաբանությունը, խորհրդանշանը, ճարտասանական դարձույթները (մասնավորապես ճարտասանական հարցն ու բացականչությունը), շրջադասությունը, բնանկարը, դիմանկարը, ուրույն կերպով դրսևորվել են նաև գեղարվեստական ժամանակը և տարածությունը:

Լեզվի պատկերավորման տարբեր միջոցների հմուտ գործածության շնորհիվ Իսահակյանի լեգենդներն ունեն ազդեցության մեծ ուժ ու արտահայտչականություն: Իրավ, «Նա հայ լեզվին տիրում է այնպես, ինչպես անապատի բեդվինը՝ նետ-աղեղին»[40]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին մեր ազգային-հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխություններն ազդեցին նաև գրականության ժանրային կազմի վրա. բանաստեղծական ժանրերն ստացան բացահայտ գերակշռություն, արձակի մեծ ձևը՝ վեպը, իր տեղը զիջեց փոքր ձևերին (պատմվածք, նովել, ակնարկ, զրույց, հեքիաթ և այլն): Ավ. Իսահակյանն այս շրջանում ստեղծեց իր արձակ բանաստեղծությունների, պոեմների ու լեգենդների մեծ մասը:
2. Լեգենդը (լատ. legenda - այն, ինչ պետք է կարդացվի) Ավ. Իսահակյանի նախասիրած ժանրերից է: Լեգենդի գեղարվեստական տիրույթում իրագործվում են աշխարհում նյութապես անիրագործելի մարդկային տենչանքներն ու ձգտումները՝ տենչացող հոգուն (Իսահակյան) հանգստություն բերելով:
3. Ավ. Իսահակյանի արձակ լեգենդների դեպքում նկատելի է ժանրային ոչ հստակ տարբերակում: Այսպես՝ Ավ. Իսահակյանի չորսհատորյակում (1958-1959) «Չինական մեծ պարսպի երգը» զետեղված է լեգենդների և զրույցների մեջ, իսկ վեցհատորյակում (1973-1979)՝ արձակ բանաստեղծությունների և պոեմների մեջ, «Ուշինարան» չորսհատորյակում՝ արձակ պոեմների, իսկ վեցհատորյակում՝ լեգենդների և զրույցների մեջ, կամ՝ «Այդ ոչինչը ես եմ» «Արձակ»-ում (1973)՝ լեգենդների և զրույցների մեջ, իսկ վեցհատորյակում՝ առակների մեջ և այլն:
4. Իսահակյանի չափածո լեգենդներում գեղարվեստական մեծ ուժով արտահայտվել են ազգային արժանապատվության, հզորության, ժողովրդի աննկուն ոգու մասին նրա ըմբռնումներն ու գաղափարները («Մեր նախահայրերը» (1917), «Աբթիլան և իր սուրը» (1932), «Ցախվի վրեժը» (1936), «Ժողովրդի քնարը» (1937):

[40] Ինճիկյան Ա., Ավետիք Իսահակյան, Եր., 1977, էջ 8:

© National Library of Armenia

5. Հայրենիքի գաղափարը՝ իր հող ու ջրով, սար ու ձորով, ժողովրդի ազատասիրության ձգտումով, արտացոլվել է Վարպետի մի շարք չափածո լեգենդներում («Իգիթ Սարդար» (1894), «Արաքսի ծնունդը» (1904), «Հայրենի հողը» (1920), «Հայաստանը» (1946) և այլն) :
6. Սիրո մոտիվների բազմազանությամբ են աչքի ընկնում Իսահակյանի չափածո լեգենդները՝ անպատասխան սեր («Սիրո վեպը», 1908), անմուրազ սեր («Լեյլի ու Մեջլում», 1910), հարատև սեր («Հավերժական սերը» 1914), սպասման հոգեբանությունը սիրո մեջ («Ասպետի սերը», 1917), բացասելով հաստատելու սիրո հոգեբանությունը («Սիրահար Նադոն», 1934) և այլն:
7. Չափ ու սահման չճանաչող մայրական անմնացորդ, անձնազոհ սերն է արտահայտվել Իսահակյանի մի քանի չափածո լեգենդներում: Ավ. Իսահակյանի քնարերգության մեջ հայրենիքի, պանդխտության ու մայրական սիրո մոտիվները հաճախ հանդես են գալիս միասին: Այդ իմաստով բնորոշ է նաև «Պանդուխտ որդին» (1902) լեգենդը, որտեղ շեշտվել է մայրական անհաղթելի սիրո գաղափարը: Իսահակյանի «Մայրը» (1907) և «Մոր սիրտը» (1919) լեգենդներում մոր հանդեպ սերը հակադրվել է կնոջ նկատմամբ սիրուն:
8. Իսահակյանի արձակ լեգենդներում կյանքը և մահն ունեն փիլիսոփայական ուրույն իմաստավորում: Ժամանակի և տարածության անսահմանության մեջ մարդու անցավոր կյանքի իմաստավորումը, մահվան հաղթահարումը Իսահակյանը տեսել է նրա արարչագործ ոգու, գթության, այլասիրության մեջ:
9. Չարի և բարու խնդիրն Իսահակյանը քննել է գլխավորապես «Չինգիզ-խանը» (1907) և «Շի-Հոանգ-Տի Բոդդիխանը» (1907) արձակ լեգենդներում: «Չինգիզ-խանը» լեգենդում բռնակալություն երևույթը բացահայտվում է կերպարի բռնակալական խառնվածքով թելադրվող վարքագծի դրսևորման միջոցով: Ի տարբերություն Չինգիզ-խանի՝ Շի-Հոանգ-Տի Բոդդիխանը ձգտում է տիրել Ոգուն ու Մտքին: Սակայն նրա ձգտումը՝ իմանալու, թե ինչ է նյութը, պատճառն ու հետևանքը, ժամանակն ու տարածությունը և այլն, սոսկ բռնակալական մղում չէ, այլև իմացության ծարավ:
10. Անձնազոհության գաղափարը Ավ. Իսահակյանի «Սգավոր արագիլը» (1912), «Մի սոխակի մահը» (1913) արձակ պոեմներում և «Աղջկա ամրոցը» (1922) լեգենդում իրագործվում է զուտ հանուն սիրո, իսկ «Ուշինարա» (1923) և «Բուդդիան թռչուն» (1925) լեգենդների մեջ զոհաբերության հիմքում ընկած է բարոյական պարտքի գիտակցությունը:
11. Ազատության՝ բռնությունից, ստրկությունից զերծ, ազատ ապրելու անհրաժեշտության գաղափարն արտահայտվել է Իսահակյանի «Արծվամանուկ» (1905), «Լեռների հսկան» (1907) լեգենդներում և «Հին ամրոցը» (1906) զրույցում:
12. Արևելքը և Արևմուտքը յուրովի ներհյուսվել են Ավ. Իսահակյանի ստեղծագործության մեջ և հատկապես լեգենդներում: Եթե արևելյան մշակույթի մեջ նրան առաջին հերթին գրավում էին կրոնական ուսմունքները, բանահյուսությունն ու պոեզիան, ապա արևմտաեվրոպական մշակույթի մեջ՝ գիտական-փիլիսոփայական մտքի

ձեռքբերումները: Այդ բոլոր ուսմունքները տարրալուծելով իր անհատական ու ստեղծագործական խառնվածքի մեջ, ենթարկելով իր «Բարձրագույն ես»-ի տնօրինությանը՝ Իսահակյանն ստեղծել է գեղարվեստական մնայուն երկեր՝ թեբ բովանդակությամբ և թեբ ձևով:
13. Իսահակյանի լեգենդներում բովանդակության լիարժեք արտահայտմանը նպաստել է պատկերավորման և արտահայտչական միջոցների (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում, չափազանցություն, նվազաբանություն, կրկնություններ, աստիճանավորում, հակադրություն, ճարտասանական դարձույթներ, շարադասություն և այլն) տեղին ու պատշաճ գործածությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Ժամանակի և տարածության, կյանքի և մահվան փիլիսոփայական խորհուրդը Ավ. Իսահակյանի արձակ պոեմներում ու լեգենդներում, «Գարուն», թիվ 525-526, Երևան, 2010, էջ 106-109:
2. Չարի և բարու, սիրո և անձնազոհության փոխհարաբերության խնդիրը Ավ. Իսահակյանի արձակ պոեմներում ու լեգենդներում, «Կանթեղ», թիվ 3(48), Երևան, 2011, էջ 9-16:
3. Ավետիք Իսահակյանի լեգենդների ու զրույցների խոհափիլիսոփայությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 137.2, Երևան, 2012, էջ 28-35:
4. Ավետիք Իսահակյանի չափածո լեգենդները տեքստաբանության լույսի տակ, «Կանթեղ», թիվ 1(54), Երևան, 2013, էջ 22-31:
5. Շարադասության ոճական արժեքը Ավետիք Իսահակյանի արձակ լեգենդներում, «Ակունք», թիվ 3(6), Երևան, 2013, էջ 169-173:

© National Library of Armenia

Ванян Асмик Самвеловна

ЛЕГЕНДЫ В СТИХАХ И ПРОЗАИЧЕСКИЕ ЛЕГЕНДЫ АВЕТИКА ИСААКЯНА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.01 – "Армянская классическая литература".

Защита состоится 28-го июня 2013 года в 12^{30}, на заседании специализированного совета ВАК 003 "Армянской и зарубежной литературы", действующего в Институте литературы имени М. Абегяна НАН РА.

Адрес: г. Ереван, ул. Г. Лусаворича, 15.

Резюме

Диссертационная работа посвящена исследованию легенд в стихах и прозаических легенд Аветика Исаакяна.

Эти произведения Исаакяна по своим нравственным мощным зарядом и своеобразным художественным приемам, гармонией формы и содержания представляют собой вечные ценности.

Мысль, идея, затронутая в его легендах, разумеется, замешена на свете, на абсолютной любви к людям. Осмысление кратковременной человеческой жизни в бесконечности пространства и времени, победу над смертью Исаакян видел в творческом духе человека, в гумманости, альтруизме.

В критике советского периода исследование литературы, в том числе творчества Ав. Исаакяна, было основано преимущественно на социологическом подходе, согласно которому литература–исскуство общественное, которое должно полностью отражать явления общественной жизни данной эпохи. В противном случае действовала мощнейшая критика, которая становилась причиной или молчания писателя, или, в лучшем случае, вырабатывания иносказательных форм передачи сказанного. В этот период не было исключением и творчество Ав. Исаакяна, и писателя могли обвинить в том, что он "бродит по неведомым дорожкам".

В более поздний период оценки творчество Ав. Исаакяна эта односторонность в какой-то мере была преодолена совместными усилиями наших литературоведов. Своими статьями, исследованиями и монографиями в это дело внесли большой вклад Л. Ахвердян и Г. Ованнисян, А. Инчикян и М. Мкрян, К. Григорьян и С. Гайсарян, Эд. Джрбашян и Гр. Тамразян, Г. Ганаланян, Ав. Исаакян и другие.

Несмотря на то, что на общем фоне исследования творчества Ав. Исаакяна были отзывы о легендах писателя, но они в некотором смысле фрагментарные и не дают возможности в целом рассматривать легенды Исаакяна. Эта работа направлена на восполнение этого пробела.

В работе исследуется жанровое своеобразие легенд, рассматриваются идейно-тематические особенности и поэтические признаки легенд Исаакяна.

Легенды Исаакяна подвергаются и текстологическому изучению, которое позволяет рассматривать художественное мышление писателя как творческий процесс.

В работе использовались различные теоретические, философские и методические исследования как армянских, так и известных русских и западных теоретиков, философов и критиков (Платона, Аристотеля, Гегеля, Штирнера, Ницше, Бахтина, Гусева, Барта, Уэллека, Уоррена, Джрбашяна, Сариняна, Аветисяна, Калантаряна и др.).

В основу методологии диссертационной работы положен литературоведический и филологический сопоставительный метод сравнительного анализа.

Во "**Введении**" кратко представлены история вопроса, актуальность темы и научная новизна, цель и задачи исследования, методологическая основа работы.

В первой главе – "Жанровые особенности легенды" выявлены главные особенности жанра: тенденция совмещения традиционного и новаторского, три важнейших критерия построения произведения, создания образа и содержания, явление взаимопроникновения жанров и создания этим путем новых литературных родов. Представлены происхождение жанра легенды и его историческое развитие, соотношение с другими жанрами устного народного творчества (балладой, преданием) и свойственные ему особенности.

На пути исторического развития жанров друг с другом противоборствуют два крайних подхода восприятия литературных родов и видов: классический и современный. Классическая теория, которую развили последователи классицизма, определяют жанровые формы как устоявшиеся и неизменяемые единицы, отрицая также возможность их взаимопроникновения. Тогда как представители современной теории считают, что в действительности жанры не неподвижные, отдаленные друг от друга единицы, а, наоборот, между ними действуют законы взаимопроникновения. В этом смысле примечательны общие черты легенды и жанра баллады, предания, мифа, беседы.

Но все же жанр легенды имеет свои отличительные четры. Эти поэтические или прозаические произведения имеют сказочную природу, в них преобладают вымышленные образы и случаи, вещи и предметы и т.д.

Во второй главе – "Идейно-тематические особенности легенд в стихах Ав. Исаакяна" по идейно-тематическому принципу анализа легенды в стихах подразделены на следующие подгруппы: историческое прошлое, родина, любовь, материнская любовь, мечта и реальность, жажда познания. В процессе художественной обработки и исследования фольклорных основ легенд, сравнивания изменений со стороны автора наблюдаются их идейные особенности.

Здесь показано, как Ав. Исаакян, углубляясь в историческое прошлое армянского и других народов, с большой художественной силой обобщил свои

© National Library of Armenia

восприятия и идеи национального достоинства, свободолюбия, процветания.

Исследовались легенды в стихах Ав. Исаакяна различной тематики: защиты родины от врагов, неизменности национальной принадлежности, мощи родной земли, притягательной силы родины, ностальгии и т.д.

В этой главе рассматривались также различные грани проявлений любви (безответная, безнадежная, вечная любовь, психология ожидания в любви и т.д.), непобедимая, всепоглощающая материнская любовь, трагический конфликт между идеалом и реальностью, ненасытная жажда познания в легендах, в стихах Мастера.

В третьей главе – "Идейно-тематические особенности прозаических легенд Ав. Исаакяна", применяя тот же принцип анализа, прозаические легенды Исаакяна сгруппированы следующим образом: жизнь и смерть, добро и зло, любовь, самоотверженность, стремление к свободе, противопоставление идеала и реальности, дух истины. В результате выявлены идейно-тематические особенности прозаических легенд Исаакяна, подчеркнут творческий подход писателя к религиозно-философским учениям Востока и Запада.

Идея жизни и смерти в прозаических легендах Исаакяна имеет своеобразное философское осмысление.

Одна из важнейших проблем науки и исскуства XX века, соотношение начал добра и зла в человеческой душе, в некоторых легендах Ав. Исаакяна раскрылась посредством проявления поведения деспота.

В исследуюмых произведениях самоотверженность осуществляется во имя любви или осознания морального долга, а идея свободы утверждается не насильственно, а при помощи просвещения.

В четвертой главе – "Изобразительные и выразительные средства легенд Исаакяна" взяты на анализ поэтические особенности легенд Исаакяна, рассмотрены широко используемые в них эпитет, сравнение, перенос, олицетворение, гипербола, порабола, повтор, противопоставление, риторические фразы.

В легендах в стихах особое внимание уделено стихосложению, а в прозаических легендах – синтаксису, вопросам пространства и времени.

В легендах в стихах Исаакяна преобладают смежные и перекрестные виды стихосложения и мужские рифмы, хотя иногда встречается и сочетание мужских и женских рифм.

В прозаических легендах инверсия субъекта-предиката и второстепенных членов предложения имеет широкое семантико-грамматическое и стилистическое применение.

Пространтсво и время, как философские категории, в художественной прозе Исаакяна выступают не просто как мотивы, а это те основы восприятия мира, на которых строится все творчество Исаакяна.

Диссертацию завершают кратко сформулированные **выводы, список использованной литературы** и **приложение**.

Vanyan Hasmik Samveli

AVETIK ISAHAKYAN'S LEGENDS IN VERSE AND IN PROSE

Dissertation to obtain the degree of a candidate of science in Philology with the Specialty of 10.01.01 - "Armenian Classical Literature"

The defense will take place on the 28th of June 2013, at 12^{30} o'clock, in the specialized Council of "Armenian and Foreign literature" at the Institute of Literature of National Academy of Science after M. Abeghyan.

Address: 15 Grigor Lusavorich, Yerevan

Annotation

The dissertation is devoted to the study of Avetik Isahakyan's legends in verse and in prose.

These compositions of Isahakyan are constant values with moral strong charges and original fictional solutions in harmony of shape and content. Sprawling mediation in his legends is truly derived from light and exclusive love towards mankind: Passing interpretation of life in time and space infinity and overcoming death Isahakyan saw in its spiritual work and charity.

In the soviet period the criticism in literature including Av. Isahakyak's works were principally examined by the sociological approach, according to which literature social art and must entirely reflect the phenomena of social life of that era. Otherwise it was being used the most powerful criticism, which became the reason of the writer's silence or in the best case allusiveness as the way to develop words for delivering. In this period it could not be exception the work of Av. Isahakyan and the writer could be accused of "wandering through unknown directions".

That unilateralation was in some way overcome by our literary critics' joint effort in the late period of evaluation of Av. Isahakyan's works. In that way their contribution had L. Hakhverdyan, G. Hovhannsiyan, A. Inchikyan, M. Mkryan, K. Grigoryan, S. Gayrasanyan, Ed. Jrbashyan, Hr. Tamrazyan, H. Ghanalanyan, Av. Isahakyan and others with their articles, studies and monographs.

Though there have been rebounds on the author's legends in the general panorama of Isahakyan's works, they are just episodes that can't enable us to observe Isahakyan's legends in whole. This work is aimed at solving that problem.

The work has examined the generic peculiarities of the legend. It has also observed the thematic-ideological, as well as the poetical features of Isahakyan's legends.

Isahakyan's legends have been studied based on the textual examination as well. And this gives us the opportunity to observe the author's literary thinking as a process of composition.

In our research have been used various theoritical, philosophical and methodological works, which were written by the Armenian, as well Russian and western famous theorists, philosophers and critics such as Plato, Aristotle, G.W.V.

© National Library of Armenia

Hegel, M. Sterner, Fr. Nietzsche, M. Bakhtin, V. Gusev, R. Bart, W. Warren, Ed. Jrbashyan, S. Sarinyan, Z. Avetisyan, Zh. Qalantaryan etc.

In the base of methodology is set the method of literal and philological analysis and comparative method.

In the introductory part we are introduced with the history of the matter in question just in short. The theme is represented as a present-day and scientifically new one with its aim of study based on the methodological basis of the work.

In the first chapter ("The Generic Peculiarities of the Legend") the main features of this genre are brought about with the goal of bringing together the traditional and the contemporary. We are introduced with the plot and the creation of images, the three important criterions of building up the legend, the interpenetrating of the genres and the phenomenon of creating new literary types in this way. Here we deal with the origin and the historical development of the legend as a literary genre and its correlation with other folk genres (ballads, sagas) and its peculiarities.

In the historical way of development of genres is facing each other two extreme approaches - classical and modern of literal types and genres. Classical theory developed by the followers of Classicism, defined genres types as ingrained and unchangeable units rejecting even their possibility of penetration. Whereas the representatives of modern theory admit that genres are stable in reality, they are not separated units, and penetration laws are used among them. In this sense it is distinctive feature of ballads, traditions, legends, conversation and similarities of legends to different genres. Yet genres of legends have their distinctive features. Verse or prose such compositions have its miracle character, in which dominates imaginable events and figures, things and subjects etc.

In the second chapter ("The Thematic-Ideological Features of Avetik Isahakyan's Legends in Verse") Isahakyan's legends in verse are divided into different subgroups, according to the analysis based on the thematic-ideological principle. Those subgroups are the historical past, Motherland, love, Mother's love, dream and reality, desire to learn. The observation of the ideological features of the legends runs through the comparison of the changes made by the author while working up the legends on the folk and literary basis.

It has been shown how Av. Isahakyan looked deeply into Armenian and other nations' history, generalized his perceptions and ideas of national dignity, strength, liberty with great power of fiction.

It has been studied Isahakyan's legends defending motherland from the enemy, dying for "Vatan" love, not denial of national identity, the power and magnetism of motherland and nostalgia.

In this chapter it has been taken in consideration also expressions of various loves: (answerless, unbegged, infinite love, psychology of waiting in love, rejecting the approval of love psychology etc), true mother's, undefeated love, dramatic collapse of idol and reality, insatiable thirst of knowledge in "Master" poetical legends.

In the third chapter ("The Thematic-Ideological Features of Avetik Isahakyan's Legends in Prose") the same principle of analysis is applied and

accordingly Isahakyan's legends in prose are classified in the following way: the life and the death, the evil and the kind, love, sacrificing, the desire of freedom, the contrast of the ideal and the reality, the spirit of wisdom. Here we deal with the thematic-ideological peculiarities of Isahakyan's legends in prose emphasizing the creative approach expressed by the author on behalf of the religious-philosophical studies of the East and the West.

The idea of life and death in Isahakyank's prose legends has philosophical unique comprehension.

One of the main issues of 20th century was revealed in some legends of Av. Isahakyan with the help of despot behavior in the correlation of kind and evil rudiment in human spirit.

In the discussed works abnegation is being implemented for love or with moral sense of duty, and the notion of freedom is confirmed not with force, but through enlightenment.

In the forth chapter ("The Expressive Devices of Isahakyan's Legends") the poetical peculiarities of Isahakyan's legends are being examined and here we observe the stylistic devices that are used widely by the author: epithet, comparison, metaphor, personification, exaggeration, repetition, gradation, contradiction, oratorical phrases.

In the case of the legends in verse special attention has been paid to the prosody while in the case of the legends in prose the emphasis has been laid on the word order and the questions of time and space.

In Isahakyak's poetical legends types of close and cross rhymes and masculine rhyme are prevailing, but sometimes we come across joint use of masculine and feminine rhymes.

In prose legends syntax has wide usage of lexica-grammatical and especially stylistic. Under Master Isahakyan pen stylistically evaluated subject, predicate and attributes of nouns, subject-predicate and cohesive members of sentence syntax.

Time and space as philosophical categories are figured out in Isahakyan's fictional prose not only as motives, but as such bases of world perception, on which increase Isahakyan's creative structure.

The dissertation is finished with conclusions formed in short, and with bibliography and appendix.

ՀՀ Ազգային գրադարան
NL0558986
© National Library of Armenia

© National Library of Armenia